

ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ

«ՊՐԱՀԱՅԻ ՀԱԽՃԱՊԱԿԻՆ»

Կիպրոսի, Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի
հակամարտությունների համեմատական վերլուծություն

Յանոս Խարալամբիդիս՝

Բանալի բաներ՝ ազգային պետություններ, հակամարտությունների կարգավորում, ինքնորոշման իրավունք, պատերազմ, ինքնապաշտպանական պայքար, բարոյականության գերակայություն:

1. Ներածություն

Պարզ և ապացուցելի է, որ մարդկության պատմության ընթացքում միջազգային համակարգը տառապել է պատմական, սոցիալական, քաղաքական և տնտեսական երևույթ հանդիսացող հակամարտություններից և պատերազմներից: Ահա թե ինչու մշտապես փորձում ենք բացահայտել պատերազմների բռնկման պատճառները, որպեսզի կարողանանք գտնել հակամարտություններն ու պատերազմները կանխելու բանաձևը (*Singer 1980; Gilpin 1981*): Հակամարտության կարճ սահմանումը կարելի է ձևակերպել որպես բախում երկու կամ ավելի կողմերի կամ պետությունների, ազգերի կամ նույնիսկ անձանց միջև (օրինակ՝ ապահարգանի դեպքում): Հողվածի նպատակներից ելնելով՝ կանդրադառնանք ազգային պետությունների միջև հակամարտություններին, որոնք հայտնի են որպես պատերազմներ: Այս առնչությամբ քննության կառնենք հակամարտու-

¹Միջազգային հարաբերությունների և եվրոպական գիտությունների դոկտոր, Կիպրոս:

թյունների և պատերազմների բռնկման պատճառները, դրանցից խուսափելու լուծումները (*Charalambides, 2011, pp.27-28; Curr, մեջբերված՝ James, 2002, p. 55*): Հոդվածում արծարծվում են Կիպրոսի, Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի չլուծված խնդիրները: Այս հակամարտությունների համեմատական վերլուծության միջոցով կոնկրետ կենք, թե ինչպես են գործում միջազգային հարաբերությունները գլոբալ համակարգում, և ճոճվում են արդյոք դրանք բարոյականության խնդիրների և ազգային շահերի միջև (*Kaplan, 1961, p. 463*): Այս վերլուծությունը հիմնված է նաև ազգային պետությունների կողմից սահմանված նպատակին հասնելու համար ձևավորվող և գործածվող ռազմավարությունների վրա: Պատերազմում պարտվում և նպատակին չեն հասնում հաճախ այն պատճառով, որ ռազմավարությունը թերի է լինում կամ ընդհանրապես բացակայում է:

1.1 Սահմանումներ

Ռազմավարության սահմանումը ձևակերպելիս կարելի է ընդգծել, որ այն որոշակի նպատակ դնելու ընթացակարգ է: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է նաև միջոցներ գտնել և մեթոդներ որոշել, այլընտրանքային տարբերակներով հանդերձ, որպեսզի հնարավոր լինի խուսափել հանկարծակիի բերող քաղաքականություններից կամ, հատկապես հակամարտության ու պատերազմի դեպքում՝ անսպասելի հարվածներից (*Collins, 2002, p. 3*): Նման կերպ գործում են նաև դիվանագիտության ոլորտում. ինչպես նկատել է Կլաուզեմիցը, պատերազմը դիվանագիտության շարունակությունն է՝ արդեն այլ միջոցների կիրառմամբ (*Clausewitz, 1989, p. 53*):

Հակամարտությունը վերացական գաղափար չէ, այլ ամենայն լրջությամբ իրականացվող մարտական գործընթաց, որի իրավական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և աշխարհառազմավարական հետևանքները ներգործում են տարածաշրջանային և գլոբալ

կայունության ու խաղաղության վրա՝ բերելով աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական փոփոխությունների: Ազգային պետությունները կամ պետությունների խմբավորումներն ու դաշինքները միջազգային ասպարեզում գործողություններ են իրականացնում և ձգտում կա՛մ ազատության, կա՛մ իրենց հզորության բարձրացման և ազդեցությունների ոլորտների *ընդլայնման* (*Charalambides, 2013, p. 3*): Բացի այդ, չի կարելի չհիշատակել նաև միջազգային որոշ կազմակերպությունների դերակատարումը, որոնք կարող են իրենց գործադրած ջանքերի շնորհիվ կանխարգելել պատերազմների բռնկումը՝ նպատակ հետապնդելով կարգավորել հակամարտությունները: Նման կազմակերպություններից են ՄԱԿ-ը, Եվրամիությունը և ՆԱՏՕ-ն: Կան նաև այլ պետություններ, որոնք, գերտերություն հանդիսանալով, պայքարում են համաշխարհային տիրապետության կամ իրենց գերակա գլոբալ դիրքերի պահպանման համար (*Braumoelle, 2013*): Միջազգային իրավունքի կիրարկումը և պետությունների ճանաչումը կարող են բերել տարբեր արդյունքների, այդ թվում՝ հակամարտությունների առաջացման (*Chhabra A, 2013, pp. 144-150*): Խնդիրն այն է, որ հարկ է ոչ միայն դիտարկել, թե ինչպես *հակամարտությունները կարող են բերել* աշխարհաքաղաքական և այլ փոփոխությունների, այդ թվում նոր պետական միավորների կամ պետությունների առաջացման, այլև հասկանալ, թե ինչպես կարելի է կարգավորել հակամարտությունը՝ դրանով իսկ հասնելով մի նոր իրավիճակի: Այս նպատակն իրականացնելու համար *կարևոր է* հաշվի առնել այնպիսի հայեցակարգեր, ինչպիսիք են սահմանված նպատակակետն ու ռազմավարությունը, ազգային շահերը, հզորությունը, ինքնորոշման իրավունքը (ըստ ՄԱԿ 1945թ. կանոնադրության), ՄԱԿ և նրա գլխավոր քարտուղարի դերը, ով պետք է որ ՄԱԿ կանոնադրության պահապանը լինի:

1.2 Պատերազմի «մեղալի» կողմերը

Այստեղ տեղին է հիշել Վիլյամ Լայոն Ֆելպսի խոսքերն այն մասին, որ լուրջ առիթ ունեցող միակ պատերազմը Տրոյականն էր, քանի որ զինվորները հիանալի գիտեին դրա *պատճառը և թե ինչի համար են նրանք պատերազմում*: Նրանք կովում էին կնոջ համար՝ գեղեցկուհի Հեղինեի (*Mithcell, 1989, p. 35*): Սա պատերազմի հեզնական տեսանկյունն է, որով կանխորոշվում է հակամարտության էթիկական հարթությունը (*Charalambides, 2011, pp. 23-26; Neibuhr, 1952, p. 40*): Հույները պատերազմում էին իրենց արժանապատվության համար: Պատերազմի առնչությամբ սա մեղալի մեկ կողմն է: Մյուս կողմում շահերն են, աշխարհառազմավարական և աշխարհաքաղաքական նպատակները: Հույները նման արշավ կազմակերպեցին ոչ թե Հեղինեի գեղեցիկ աչքերի համար, այլ որովհետև ցանկանում էին վերահսկել Դարդանեյի նեղուցը, որը մինչև այսօր առանցքային ռազմավարական նշանակություն ունի: Ահա և հետագոտության դասական մի օրինակ, որի միջոցով կարելի է կանխագուշակել մեղալի երկու կողմերը: Այսպիսով, հարցը հետևյալն է. արդյոք ինքնորոշման իրավունքը պատերազմի մեղալի էթիկա-իրավակա՞ն կողմն է, թե՞ նաև հանդիսանում է ազգային շահերն առաջ մղելու մեթոդական գործիք: Երկակի ստանդարտների քաղաքական հայեցակարգը հիմնված է այս գործընթացի վրա և, թերևս, հանդես է գալիս որպես միջազգային հարաբերություններում գերիշխող քաղաքական երևույթ:

2. Միջազգային համակարգը և հակամարտությունները

Տրոյական պատերազմի օրինակը կարելի է օգտագործել որպես պատմական հիմք և քաղաքական մեթոդ՝ անցյալը ներկայի հետ կապելու և միջազգային համակարգի գործելակերպը քննելու համար: Այս առթիվ պնդում ենք, որ միջազգային համակարգը ներկայումս գտնվում է Երրորդ համաշխարհային պատերազմ հիշեցնող իրա-

վիճակում (*Charalambides, 2013 pp. 196-198*): Ընթանում են տարբեր տեսակի պատերազմներ, այդ թվում.

1. Սովորական պատերազմներ, որոնք բռնկվում են ազգային պետությունների միջև: Այս պատերազմների համատեքստում կարևորվում են կիրառվող ռազմական, իրավական, տնտեսական և դիվանագիտական միջոցները: Իրանի նկատմամբ միջազգային հանրության կողմից կիրառվող պատժամիջոցները (*Charalambides, 2013, pp.128-129; European Council 2012*) նման կարգի են, և դրանց համար իրավական հիմքեր են հանդիսանում ՄԱԿ Անվտանգության խորհրդի ընդունած համապատասխան որոշումները: Այս կատեգորիային են դասվում նաև քաղաքացիական և պարտիզանական պատերազմները: Դրանցից են Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմը (*European Council, 2012a*) և Վիետնամի պատերազմը (*Solheim, 2008, p. 206*):
2. Պետությունների և շուկաների միջև պատերազմը, որը հանգեցրեց ներկայիս տնտեսական ճգնաժամին (*Charalambides, 2013, p.33; Tanzi, 2011*):
3. Ահաբեկչության դեմ պատերազմը, որն ընթանում է ամենուր և ոչ մի կոնկրետ տեղ՝ «Ալ-Ղաիդայի» և ահաբեկչական այլ կազմակերպությունների դեմ (*Charalambides, 2013, pp. 54-55; Bush, 2001*):
4. Կիրեոպատերազմը, որն իրականում անտեսանելի պատերազմ է՝ տեսանելի արդյունքներով և հետևանքներով (*Charalambides, 2013, p. 36; Clark, 2010, p. 6*):
5. Քիմիական կամ միջուկային պատերազմ (դրանց վտանգը միշտ էլ առկա է գլոբալ օրակարգում, քանի որ զանգվածային ոչնչացման զինատեսակները գոյություն ունեն): 2013թ. սեպտեմբերին Բաշար ալ-Ասադին քիմիական զենք կիրառելու մեղադրանք ներկայացնելով ԱՄՆ-ը կանգնած էր Սիրիայի հետ պատերազմ

մի եզրին: Սակայն համաձայնություն ձեռք բերվեց Ասադի ռեժիմի քիմիական զինանոցի ոչնչացման վերաբերյալ: Հարց է առաջանում. արդյոք նման համաձայնագիր կստորագրվե՞ր առանց ԱՄՆ-ի կողմից ռազմական ուժի կիրառման սպառնալիքի, անմեղ բնակչությանը և մարդու իրավունքները պաշտպանելու փաստարկով: Ճշմարտությունն այն է, որ համաձայնագիրը *երբեք չէր ստորագրվի*, եթե տեղի չունենար ԱՄՆ ռազմական մեքենայի մոբիլիզացում՝ ուղեկցվելով Վաշինգտոնի կողմից դրա կիրառման մտադրության բացեիբաց հայտարարությամբ:

2.1 Հակամարտության առաջացման պատճառները

Միջազգային համակարգին մշտապես բնորոշ են եղել արյունալի հակամարտություններն ու պատերազմները: Չնայած միջազգային հանրության գործադրած ջանքերին, աշխարհով մեկ բազմաթիվ հակամարտություններ այդպես էլ հանգուցալուծում չեն ստանում: Այս առնչությամբ հնարավոր չէ որևէ հակամարտություն վերլուծել առանց պատերազմների բռնկման դասական պատճառներին անդրադառնալու: Հակամարտությունների առաջացման պատճառները թվարկելիս անհրաժեշտ է առանձնացնել հետևյալները.

1. Ազգային շահերի տնտեսական, առևտրային, սոցիալական և ռազմական բախում (*Dougherty and Phaltzgraff, 1992, pp. 53-54*): Այս պատճառները վերաբերում են հասարակության միասնականությանը, քաղաքական համակարգի տեսակին ու կառուցվածքին, ինչպես նաև պետությունում ժողովրդավարության մակարդակին: Ազգային շահերի և հակամարտության մեջ ընդգրկված կողմերի մասին խոսելիս պետք է անդրադառնալ հակամարտության ոչ միայն ներքին, այլև արտաքին դերակատարներին: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել գլոբալ և տարածաշրջանային դերակատարների շահերը, նրանց քաղա-

քականությունը, նպատակներն ու ռազմավարությունները: Ինչ վերաբերում է քաղաքական համակարգերին, հարկ է ուսումնասիրել հակամարտությունից բխող քաղաքական, իրավական և աշխարհառազմավարական հետևանքներն ու պետությունում արդեն ձևավորված սահմանադրական կառուցվածքի հետ դրանց փոխներգործությունը: Այս տեղեկությունները կարևորվում են ոչ միայն հակամարտությունների առաջացման պատճառների դիտարկման տեսանկյունից, որոնցից մեկն էլ տվյալ քաղաքական համակարգում ժողովրդավարության պակասն է, այլև հնարավոր հանգուցալուծման ձևաչափի և կառուցվածքի առումով: Այլ կերպ ասած՝ պետության անկում առաջացնող պատճառներից կարելի է էական դասեր քաղել և դրանցից ելնելով մշակել կենսունակ լուծումների ստացման մեթոդական գործիքներ: Այս տրամաբանությունը վերաբերում է նաև սահմանադրական կառուցվածքի ձևերի ընտրությանը, այսինքն՝ միատարր պետություն, թե առանձին պետական միավորների միասնություն՝ դաշնության կամ համադաշնության տեսքով:

2. Ազատության, ազգային անկախության համար մղվող պաշտպանական պայքար, թե՛ նոր տարածքների նվաճման համար մղվող պատերազմ: Սա վերաբերում է հակամարտության կամ պատերազմի մասին տրվող դասական հարցին՝ արդյոք այն արդա՞ր նպատակներ է հետապնդում (*Elsa, 2007, pp. 10-13*), և կարո՞ղ է արդյոք իրավական հետևանքներ ունենալ ու արդյունքներ տալ: Արդար պատերազմի հասկացությունն ընդգրկում է սեփական պետությունը պաշտպանելու (ինքնապաշտպանության) իրավունքը: Այդ իրավունքն ամրագրված է ՄԱԿ կանոնադրության հոդված 51-ում (*Charter of the UN, 1945a*): Գոյություն ունեն նաև հակամարտության առաջացման այլ պատճառներ. ա) սպառնալիքի կամ ռիսկի տակ հայտնված

ազգային փոքրամասնության պաշտպանություն, բ) անջատման և/կամ ազգային աղետի կանխարգելում (օր.՝ ադրբեջանցիները պնդում են, թե իրենք պայքարում են տարածքի անջատման և հայերի կողմից դրա օկուպացման դեմ), գ) որևէ տարածքի նկատմամբ գերիշխանության հաստատում (*Dougherty and Pfaltzgraff, 1992a, p. 42*):

3. Ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանային և գլոբալ համակարգերի հիմքում ընկած հիմնական գործոնն է և միջազգային համակարգում պետությունների համար կայունության ու խաղաղության պահպանման դեղատոմսը: Ռազմավարական այս հայեցակարգն անհրաժեշտ է նկատի ունենալ հակամարտությունների լուծման բանաձևը գտնելու համար: Հանգուցալուծումը սովորաբար բխում է հակամարտության մեջ ներքաշված կողմերի միջև առկա ուժերի հավասարակշռությունից կամ անհավասարակշռությունից (*Dougherty and Pfaltzgraff, 1992, pp. 57-59, Spykman, pp. 21-22, Kaplan, 1976, p. 22-36*): Եթե ընդունենք, որ կարգավորման հարատևության հիմնական տարրերից մեկը կայունությունն է, ապա ուժերի հավասարակշռությունը կենսունակ ու հարատև լուծման անփոխարինելի գործոններից մեկն է: Նույն տրամաբանությամբ, ուժերի անհավասարակշռությունը հակամարտության առաջացման հիմնական պատճառներից մեկն է (*Dougherty and Pfaltzgraff, 1992a, p. 74*): Օրինակ, եթե ադրբեջանցիները զգան իրենց ուժի գերակշռությունը, և երբ նրանց նավթագազային պաշարները մեծ մասամբ *սպառված* լինեն, այդժամ Լեռնային Ղարաբաղի վրա հարձակման հավանականությունը կմեծանա՝ հասնելով ներկա ժամանակաշրջանի համեմատ շատ ավելի բարձր մակարդակների: Իհարկե, կան նաև այլ փոփոխականներ, օրինակ՝ տարածաշրջանային և գլոբալ տերությունների աշխարհաքա-

ղաքական և աշխարհառազմավարական շահերը, որոնք հաճախ մտնում են խաղի մեջ՝ կանխելով ռազմական գործողությունների վերահսկումը կամ հակառակը՝ բորբոքելով «սառեցված» հակամարտությունները:

3. Հակամարտությունների համեմատությունը

Կիպրոսի հակամարտությունն այս հոդվածում դիտարկվողներից մեկն է: Այս հակամարտությունը սկիզբ է առել անցյալ դարի 50-ականներին, երբ Կիպրոսի հույները ոտքի կանգնեցին իրենց ինքնորոշման իրավունքի պաշտպանության և Հունաստանին միանալու (Էնոսիս) համար, և տարիներ շարունակ հանգուցալուծում չի ստանում (*Charalambides, 2011, pp. 42-48; Sarris, 1982, pp. 65-66*): Դա պայքար էր բրիտանական գաղութատիրության դեմ, որն այդպես էլ չհասավ վերջնական նպատակին՝ «միացմանը»: Ներգրավված կողմերը եկան փոխզիջման՝ ստեղծելով կարծեցյալ անկախ երկիր երեք երաշխավոր պետությունների՝ Հունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի խնամակալության ներքո (*Charalambides, 2011, 97-113; Papageorgiou, 1988, pp. 189-190 and 243; Ministry of Foreign Affairs of the Republic of Cyprus, 2013*): Կիպրոսի փոքրիկ պետության վրդովմունքը մեծ էր, երբ 1974թ. թուրքական զորքերը ներխուժեցին երկիր: Կիպրոսի խնդիրը կարելի է որպես հիմք ընդունել Լեոնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունները համեմատելիս: Տեղին կլինի հարց առաջադրել. արդյոք Կիպրոսի խնդիրը նման է Լեոնային Ղարաբաղի խնդրին: Այս հարցի պատասխանը գտնելու համար անհրաժեշտ է դիտարկել փաստերը և վերլուծել նշված հակամարտությունների հիմնական բնութագրերը: Այս առնչությամբ ընդգծենք հետևյալը.

1. Լեոնային Ղարաբաղի բնակչությունը բնիկ ժողովուրդ է, որը երբեք չի ընդունել խորհրդային ռեժիմի պարտադրած ստատուս-քվոն (*Zürcher, 2007, p. 154; A Memorandum Prepared by the Pub-*

lic International Law & Policy Group and the New England Center for International Law & Policy, 2000): Խոսքն ինքնավար մարզի իրավաքաղաքական կարգավիճակի մասին է, որով Լեոնային Ղարաբաղն ընդգրկվում էր Ադրբեյջանի կազմում՝ որպես Խորհրդային Միության դաշնային քաղաքական համակարգի մաս (*Walker, 1990, pp. 285–90*): Պատմականորեն և իրավաբանորեն ապացուցվել է, որ Խորհրդային Միության դաշնային քաղաքական համակարգը բռնապետական ռեժիմի արտահայտությունն էր, և կարելի է պնդել, որ նման ռեժիմի պարտադրած տարածքային փոփոխություններն ու ստեղծած քաղաքական միավորները թերի էին ժողովրդավարության ու օրինականության տեսանկյունից: Դրանք չէին արտահայտում բնիկ ժողովուրդների ազատ կամքը: Իրականում, երբ Խորհրդային կայսրությունն անկում ապրեց, տեղի ունեցան աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական փոփոխություններ, ինչը հանգեցրեց քաղաքական բեմահարթակում նոր պետությունների ի հայտ գալուն: Ճանաչվելու համար այդ պետությունները պետք է բավարարեին Մոնտեիդեյոյի կոնվենցիայով սահմանված որոշակի չափանիշների: Այսպիսով, որպես պետություն միջազգայնորեն ճանաչվելու համար անհրաժեշտ է բավարարել հետևյալ նախապայմանները. ա. տարածք (հողատարածք), բ. ժողովուրդ, այսինքն՝ մշտական բնակչություն, գ. իշխանություններ՝ վարչակազմ. դ. որոշակի տարածքում սահմանադրական լիազորություններ գործադրելու ունակություն (*Council on the European Relations*), այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն: Այստեղ հարկ էնք համարում ավելացնել կարևորագույն նշանակության ևս մեկ չափանիշ՝ օրինականությունը, որը կապված է ինքնորոշման իրավունքի և տվյալ պետական միավորի գոյացման իրավաքա-

ղաքական պայմանների ու հանգամանքների հետ: Հետևապես, այս չափանիշը համապատասխանում է պետության մասին Ելինեկի տեսությանը և տվյալ երկրում բնակվող ժողովրդին հատուկ բնատուր և նախաստեղծ լիազորություններին:

2. Խորհրդային Միության փլուզումից հետո Լեոնային Ղարաբաղի հայերը փորձեցին կյանքի կոչել ինքնորոշման իրենց իրավունքը: Այստեղ անհրաժեշտ է նկատել, որ նախքան ԽՍՀՄ փլուզումը ադրբեջանցիներն իրականացրին Լեոնային Ղարաբաղի հայերի դեմ ուղղված գործողությունների քաղաքականություն (*Martin, 2001, p. 594*): Մասնավորապես, ադրբեջանաբնակ հայության, հատկապես մեծ քաղաքներում, օրինակ՝ Բաքվում բնակվող հայերի հանդեպ կազմակերպվեցին և իրագործվեցին արյունահեղ դաժանություններ (*Charalampidis, 2013, p. 3*): Հայերն այլ ելք չունեին, քան պաշտպանել իրենց բնական, կենսաբանական և ազգային գոյությունը: Հակամարտությունը սրվեց և տարածվեց Լեոնային Ղարաբաղի ողջ տարածքով: Քանի որ միջազգային հանրությունը ձեռնպահ մնաց, հայերը ստիպված էին պայքարել իրենց ազատության և արժանապատվության համար: Փաստորեն, սա ինքնապաշտպանական պայքար էր, որի իրավական հիմքերը սահմանված են ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածում: Դրան հակառակ՝ ադրբեջանցիները պայքարում էին իրենց պետության միասնականությունը պահպանելու համար:
3. 1994թ. հայերը հաղթանակով ավարտեցին պատերազմը և ստեղծեցին Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ շարունակելով հիմնվել ինքնորոշման իրենց իրավունքի վրա (ըստ ՄԱԿ կանոնադրության 1-ին հոդվածի կետ 2-ի): Չնայած Լեոնային Ղարաբաղը որպես պետություն համապատասխանում է միջազգային իրավունքով պահանջվող բոլոր չափանիշներին, այն չի

ճանաչվել ո՛չ միջազգային հանրության, ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության կողմից: Հայերի պահանջածը իրենց ինքնորոշման իրավունքն է, որի միջոցով Լեռնային Ղարաբաղը կկարողանար օրինականանալ և ճանաչվել որպես պետություն կամ միանալ Հայաստանին, օրինակ՝ դաշնության կամ համադաշնության շրջանակներում: ՄԱԿ Անվտանգության խորհուրդը մի շարք որոշումներ է ընդունել (թիվ 822, 853, 874 և 884)՝ հակամարտությունում ներքաշված կողմերին կոչ անելով հարգել զինադադարի պայմանները, իսկ ՀՀ-ին՝ դուրս բերել իր զորքերը Լեռնային Ղարաբաղից, որը միջազգային հանրությունը մինչ այժմ համարում է ադրբեջանական քաղաքական համակարգի կազմում գտնվող ինքնավար մարզ: Այդ տեսանկյունից, ադրբեջանական տարածքի 14%-ը¹ գրավված է, և ժամանակին այնտեղ ապրող ադրբեջանցիները նույնպես համարվում են տեղական բնակչություն, որոնք իրավունք ունեն վերադառնալ իրենց տներն ու ունեցվածքին: Օրինականության և միջազգային իրավունքի սկզբունքներից ելնելով՝ այդ տարածքներն իսկապես պետք է վերադարձվեն Ադրբեջանին, և ադրբեջանցիները պետք է ունենան իրենց տները վերադառնալու իրավունք: Սակայն հարց է ծագում. մի՞թե Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չունի ինքնորոշման իրավունք: Համապատասխանաբար, հարկավոր է սահմանել, թե ինքնորոշման իրավունքն ինչ է ենթադրում, ինչպիսին են դրա իրավական հիմքերը և ինչպես են այդ իրավաքաղաքական հիմքերը խարսխված միջազգային իրավունքում: Ինչպես սահմանված է ՄԱԿ կանոնադրության 1-ին հոդվածի կետ 2-ով, ինքնորոշումը ժողովուրդների կողմից սեփական ճակատագրի, ապագայի և ինքնակառավարման մասին որոշումներ կայացնե-

¹ Հայկական վերահսկողության տակ գտնվող նշված 14%-ից 8,9%-ը Լեռնային Ղարաբաղի անկլավի սահմաններից դուրս է գտնվում (*De Waal, 2003, p. 286*):

լու իրավունքն է (ՄԱԿ կանոնադրություն): Գեորգ Ելինեկի «պետության մասին տեսության» համաձայն (*Tsatsos, 1985, pp. 62-72*)՝ ժողովուրդը տեղական բնակչությունն է, որը պատմական և մշակութային արմատներ ունի տվյալ տարածքում և մշտապես բնակվում է տվյալ տարածք-երկրում: Այս ժողովուրդն է, որ ունի բնատուր և նախաստեղծ լիազորություններ (*Jellinek, մեջբերված՝ Tsatsos, 1985, p. 62*): Բնիկ ժողովուրդների և նրանց իրավունքների, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի մասին ՄԱԿ-ը տալիս է շատ հստակ սահմանում. «Պատմական շարունակականությունը հետևյալ գործոններից մեկի կամ մի քանիսի տևականությունն է երկար ժամանակի ընթացքում, ընդհուպ մինչև ներկա ժամանակ.

- Նախնիների տարածքի կամ գոնե դրա մի մասի զբաղեցում:
- Տվյալ տարածքների նախաբնակների հետ արյունակցական կապ:
- Մշակույթն ընդհանրապես կամ կոնկրետ դրսևորումներում (օրինակ՝ կրոն, ցեղային համակարգ, բնիկ համայնքի անդամություն, տարագ, ապրուստի միջոցներ, ապրելակերպ և այլն):
- Լեզու (միակ լեզու կամ մայրենի լեզու, որն օգտագործվում է որպես սովորական հաղորդակցության միջոց տանը կամ ընտանիքի անդամների հետ շփվելու համար, կամ որպես հիմնական, նախընտրելի, առօրյա, ընդհանուր կամ սովորական լեզու):
- Բնակչություն երկրի որոշակի մասերում կամ աշխարհի որոշակի տարածքներում:
- Այլ համապատասխան գործոններ:

Որպես անհատ՝ բնիկ է համարվում այն անձը, ով պատկանում է տվյալ բնիկ ժողովրդին իր ինքնանույնականացմամբ (խմբային գիտակցությամբ) և ճանաչվում ու ընդունվում է տվյալ բնիկ ժողովրդի կողմից որպես իր անդամներից մեկը (խմբի կողմից ընդունում): Այսպիսով, նշված համայնքներին վերապահվում են ինքնիշխան իրավունք և լիազորություն՝ առանց արտաքին միջամտության որոշելու համար, թե ով է իրենց շարքերին պատկանում» (United Nations, 2004, p. 2):

Լեռնային Ղարաբաղի ժողովրդի մասին խոսելիս նկատի ունենք ոչ միայն հայերին, այլև օրինաբար այնտեղ բնակվող բոլոր այլ ազգություններին (*Tsatsos, 1985, p. 66*)¹: Այս առումով, ինքնորոշման իրավունքը պատկանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդին, որի ազգային մեծամասնությունը կազմում են այդ տարածքում օրինաբար բնակվող հայերը: Փոքրամասնություններին սովորաբար տրվում են իրավական և քաղաքական երաշխիքներ՝ կարգավորումից բխող սահմանադրական կարգի միջոցով: ՄԱԿ կանոնադրությունում ինքնորոշման իրավունքն ամրագրված է հոդված 1-ի 2-րդ կետում և դրանով իսկ սկզբունքային հարց է հանդիսանում, սակայն կախված է այն ժողովրդից կամ ժողովուրդներից, որոնք պահանջատեր կլինեն այդ իրավունքին և կպայքարեն դրա համար: ԵԱՀԿ Մինսկի խմբի 2013թ. հոկտեմբերի 17-ի մամլո հաղորդագրությունից պարզ է դառնում, որ ինքնորոշման իրավունքին գերակա նշանակություն է տրվում բանակցությունների օրակարգում (*Minsk Group, 2013*): Այսպիսով, ինքնորոշման իրավունքը հակամարտության կարգավորման առանցքային խնդիրներից մեկն է: Դրանից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ միջազգային իրավունքի մեկնաբանության և Լեռնային Ղա-

¹ Ինչպես ընդգծում է հեղինակը (*Tsatsos, 1985*), «ժողովուրդ» հասկացությունը տարբերվում է «ազգից» նրանով, որ ժողովրդի մեջ կարող են ընդգրկված լինել մեկից ավելի ազգեր:

րաբաղի հակամարտության էությունը կազմող փաստերի միջև առկա է որոշակի հակասություն: Հաշվի առնելով, որ հայկական զորքերը ոչ թե օկուպացնող, այլ ազատագրող ուժ են հանդիսանում, քանի որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է հայ ազգին, ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևը միաժամանակ ն՛ համապատասխանում, ն՛ հակասում է միջազգային օրենսդրությանը: Համապատասխանում է, եթե համարենք, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի անբաժանելի մասն է: Սակայն, հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերը երբեք չեն համակերպվել խորհրդային բռնապետական ռեժիմի պարտադրած քաղաքական համակարգի հետ, ապա հայկական զորքերի դուրսբերումը նախատեսող ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևը հակասում է միջազգային իրավական նորմերին: Այս տեսակետի հիմքում ընկած է այն հայեցակարգը, որ Լեռնային Ղարաբաղի պատերազմն ազատագրական բնույթ էր կրում, և որ հայկական զորքերը տեղակայված են այնտեղ՝ բնիկ հայ բնակչությանը պաշտպանելու նպատակով, որը շարունակում է պայքարել իր ինքնորոշման իրավունքի համար: Ավելին, կարելի է պնդել, որ ադրբեջանական զինված ուժերը փորձում էին անել այն, ինչ իրականացնում էր սերբական զորքը Կոսովոյում, որի դեպքում ՆԱՏՕ-ն միջամտեց և հարված հասցրեց Սլոբոդան Միլոշևիչի վարչակարգին: Հարցն այն է, թե ինչու մի դեպքում միջազգային հանրությունը պատժեց սերբական ռեժիմը՝ Միլոշևիչի կառավարության կողմից խախտված մարդու իրավունքների վերականգնման պատրվակով, իսկ մյուս դեպքում՝ ղարաբաղյան պատերազմի ժամանակ հրաժարվեց պաշտպանել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը: Այսպիսով, միջազգային իրավունքի դրույթները քննելուց զատ, պետք է անդրադառնանք նաև ազգային շահերին, որոնք, հանդես գալով որպես քաղաքական և տնտեսական գործիքներ, կանխորոշում են գերտերությունների և միջազգային հանրության քաղաքական և իրավական դիրքորոշումներ-

որը: Կիպրոսի և Լեռնային Ղարաբաղի խնդիրների համեմատության կապակցությամբ պնդում ենք հետևյալը. Լեռնային Ղարաբաղի ազատագրումը հայերի կողմից նույնն է, ինչ եթե հույներն ազատագրեին Կիպրոսի հյուսիսային մասը, որը շարունակում է մնալ թուրքական զորքերի վերահսկողության տակ: Այս դեպքում հունական և կիպրահունական ուժերը չեն համարվի օկուպացիոն, այլ կդիտվեն որպես ազատագրող բանակ, որը վերականգնում է պատմական և ազգային շահերը, ինչպես նաև թուրքական զինված ուժերի կողմից խախտվող սահմանադրական կարգը:

3.1 Մանջուրական պետությունը

Հայկական զորքերի ներկայությունը Լեռնային Ղարաբաղում բուրբուրվին այլ իրավական կարգավիճակ ունի, քան Կիպրոսում ապօրինաբար տեղակայված թուրքական զինված ուժերինը: Կիպրոսի հակամարտությանն անդրադառնալիս հարկ է նկատել, որ թուրքական զորքերը ներխուժեցին Կիպրոս 1974թ.՝ սահմանադրական կարգը վերականգնելու պատրվակով: Թուրքերի պնդմամբ՝ Կիպրոսի Հանրապետությունում սահմանադրական կարգը խախտվել էր հունական խունտայի կազմակերպած և իրականացրած պետական հեղաշրջման հետևանքով: Ներխուժումից երեք օր անց խունտան կազմալուծվեց, սակայն թուրքական զորքերն այդպես էլ երբեք չվերականգնեցին սահմանադրական կարգը՝ հակառակ իրենց ստանձնած պատասխանատվության: Ավելին, նրանք կղզու հյուսիսում ստեղծեցին առանձին «պետություն», որը չի ճանաչվել միջազգային հանրության կողմից: Առանձին «պետության» հռչակումից հետո թուրքական կառավարությունն առաջ քաշեց դաշնության կամ համադաշնության ստեղծմանն ուղղված ռազմավարական ծրագիր՝ փորձելով նման կերպ օրինականացնել 1974թ. թուրքական զորքերի կողմից ստեղծված իրողությունը: ՄԱԿ Անվտանգության խորհուրդն այս առիթով երկու համապատաս-

խան բանաձև է ընդունել (թիվ 541 և 550), որոնք հստակ որակում են «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը» որպես ապօրինի կառույց, որը չի կարող ճանաչվել միջազգային հանրության կողմից: Այս բանաձևերը հիմնվում են ՄԱԿ կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի վրա, համաձայն որի՝ բռնի ուժի կիրառմամբ ստեղծված որևէ պետություն, միավոր և իշխանություն չի կարող ճանաչվել (*UN Charter, 1945b, p. 3*): Այս հոդվածի հիմքում ընկած են Մանջուրիայի դեպքը և Ստիմսոնի դոկտրինը: Երբ 1931թ. Չինաստանը բողոք ներկայացրեց Ազգերի լիգա առ այն, որ Ճապոնիան խամաճիկ պետություն է ստեղծել Մանջուրիայում, Ազգերի լիգան պատվիրակություն ուղարկեց՝ տեղում պարզելու, թե իրականում ինչ է տեղի ունեցել: Մանջուրիա կատարած այցից և իրականացրած հետաքննությունից հետո պատվիրակությունը զեկույց հրապարակեց՝ հիմնված «Ստիմսոնի դոկտրինի» վրա, որը 1929-1933թթ. պաշտոնավարած ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Հենրի Լյուիս Ստիմսոնի մշակած ռազմավարությունն էր: Այդ ռազմավարությամբ ԱՄՆ-ը հակադրվում էր Ճապոնիայի կողմից Ասիայում իրագործվող ծավալապաշտական և իմպերիալիստական քաղաքականությանը (*United States Department of States, 2009*): Ինչպես նշվում էր զեկույցի հեղինակներից մեկի անվամբ¹ կոչված «Լիթոնի զեկույցում», Մանջուրիան «խամաճիկ պետություն» էր, որը բռնի ուժի կիրառմամբ ստեղծվել էր Ճապոնիայի կողմից և իրականում գտնվում էր վերջինիս ռազմական վերահսկողության տակ (*Ferrell, 1955, pp. 66-72*): Սա բարձր հնչեղություն ստացած դեպքերից էր, որի վրա հիմնվելով՝ միջազգային իրավակարգում իրավաբանական ձևակերպում ստացավ այն, թե ինչու միջազգային հանրությունը չի կարող ընդունել ուժի կիրառմամբ

¹ Լիթոնի հանձնաժողովի ղեկավարն էր Մեծ Բրիտանիայի Լիթոնի կոմս Վ.Բուլվեր-Լիթոնը, իսկ անդամների թվում էին ևս չորս անձինք՝ զեներալ-մայոր Ֆրենկ Ռոս Մըքֆոյը ԱՄՆ-ից, դոկտ. Հայնրիխ Շենեն Գերմանիայից, կոմս Ալբրովանդի-Մարեկոտին Իտալիայից և զեներալ Անրի Կլոդելը Ֆրանսիայից:

կատարված ապօրինի գործողությունները, դրանց իրավական հետևանքները, այդ թվում՝ պետության ստեղծումը: Այս իրավաբանական հիմնավորումը նկատի ունենալով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայացրեց իր վճիռը Կիպրոսի Հանրապետությունն ընդդեմ Թուրքիայի դատական գործում (*European Court of Human Rights, 2001*): Վճռի համաձայն, այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը» խամաճիկ պետություն է, և Թուրքիայի կառավարությունը պատասխանատվություն է կրում կղզու հյուսիսային մասի գրավված տարածքներում սեփականության և մարդու այլ իրավունքների խախտման համար: Այս տեսակետի իրավական փաստարկը հիմնված է այն բանի վրա, որ «հյուսիսում գտնվող իշխանությունները» կղզում ապօրինաբար տեղակայված թուրքական զինված ուժերի վերահսկողության տակ են: Ի հակադրություն դրա, Լեռնային Ղարաբաղի դեպքը բոլորովին տարբերվում է Կիպրոսի հակամարտությունից: Պատմական, ազգային և մշակութային առումով Լեռնային Ղարաբաղը հայկական տարածք է: Հետևապես, այնտեղ տեղակայված հայկական զորքերը ոչ թե օտարերկրյա օկուպացիոն ուժեր են, այլ ազատագրող բանակ: Եվ հակառակը, Կիպրոսի Հանրապետությունում տեղակայված թուրքական զորքերն օկուպացիոն ուժեր են:

3.2 Մրի տեսությունը և ինքնորոշումը

Այս հանգամանքներում հարկ ենք համարում նաև ընդգծել, որ Կիպրոսի հյուսիսային մասի օրինական բնակիչների 82%-ը ստիպողաբար լքել է իր հայրենիքը՝ ապօրինի գործողության, այսինքն՝ թուրքական զորքերի ներխուժման և մարդու իրավունքների խախտման հետևանքով (*Cuco, 1992, p. 5*)¹: Ներխուժումն առաջին փուլն էր թուրքական ռազմավարության, որը մշակվել էր բրիտանացիների հետ

¹ Այս 82%-ի 1.8%-ը կազմում են Կիպրոսի Հանրապետության այլադավան այն անձինք, ովքեր գերադասել են հանդես գալ որպես Կիպրոսի հույն համայնքի անդամներ:

միասին 1956թ. և նպատակաուղղված էր կղզու *մասնատմանը* (*Sarris, 1982, p. 65-66 and 128-134; Dikerdem, 1977, p. 125*): Թուրքական ռազմավարության երկրորդ փուլն այսպես կոչված «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ստեղծումն էր (15/11/1983թ.): Քաղաքական այս ակցիան ի ցույց հանեց, որ թուրքական գորքերի ներխուժումը ոչ թե սահմանադրական կարգի վերականգնումն էր, այլ առանձին պետական միավորի ստեղծումը: Նախ, թուրքական կառավարությունը ստիպեց Կիպրոսի թուրք բնակչությանը լքել կղզու հարավային մասերը և տեղափոխվել հյուսիս: Այնուհետև իրականացվեց գաղութացման ռազմավարություն՝ բուն Թուրքիայից բնակչություն տեղափոխելով Կիպրոս և աստիճանաբար փոխելով ոչ միայն Կիպրոսի հյուսիսային մասի, այլև ողջ կղզու ժողովրդագրական իրավիճակը (*Charalambides, 2011, p.133; Gavriil, 2007*): Սա դեռևս օսմանյան ժամանակաշրջանից եկող տիպիկ թուրքական ռազմավարություն է: Երբ այդ ժամանակաշրջանում թուրքերը որևէ տարածք էին նվաճում, ապա ստիպում էին բնիկներին հավատափոխ լինել և մահմեդական դառնալ: Հակառակ դեպքում կազմակերպվում և իրականացվում էր էթնիկ գտում՝ միաժամանակ տարածքը հեղեղելով այլ շրջաններից բերված թուրքերով: Ռազմավարական այս գործողությունը կոչվում է «սրի տեսություն» (*Sarris, 1983; Sarris, 1990*): Գաղութացումը ռազմական հանցագործություն է, և ըստ 1949թ. Ժնևի 4-րդ կոնվենցիայի, Կիպրոսի հյուսիսային մասում ներկայումս ապրողներն ապօրինաբար են այնտեղ բնակվում՝ հանդես գալով որպես հարցի կարգավորման հիմքում դրված դանդաղ գործողության մեխանիզմով ռուբ (*Laasco, 2003, articles 42-44*): Ո՛չ Կիպրոսի թուրքերը, ո՛չ էլ թուրք նորաբնակները չեն հանդիսանում կղզու հյուսիսային մասի բնիկներ: Հետևաբար, նրանք չեն կարող օգտվել ինքնորոշման իրավունքից: Այնուհանդերձ, թուրքերի ռազմավարության երրորդ փուլով փորձ է կատարվում օրինականացնել 1974թ. թուրքական գոր-

քերի ներխուժմամբ ստեղծված իրողությունները, երկտարածքային և երկհամայնքային դաշնային համակարգ ստեղծելու ճանապարհով (*Charalambides, 2011, pp. 128-134*): Ի տարբերություն այս ամենի, Լեոնային Ղարաբաղում ապրող ժողովուրդը բնիկ, մշտական և օրինական բնակչություն է: Այնտեղ բնակվող հայերը կազմում են օրինական ամբողջ բնակչության ճնշող մեծամասնությունը և ունեն ինքնորոշման իրավունք: Ինչպես նշվեց, ինքնորոշման իրավունքը պատկանում է և կարող է իրավաբանորեն տրվել բնիկ ժողովրդին, որը պատմական արմատներ ունի որոշակի տարածքում և մշտապես բնակվում է այնտեղ: Ահա սրանք են միջազգային իրավունքով և ՄԱԿ «բնիկ ժողովուրդների հայեցակարգով» սահմանված օրինականության չափանիշները (*United Nations, 2004, p. 2*): Ինչպես տեսնում ենք, Լեոնային Ղարաբաղի հայերը բավարարում են ինքնորոշման իրավունքի համար միջազգային իրավակարգով նախատեսված չափանիշներին, իսկ Կիպրոսի գրավված հյուսիսային մասի բնակիչները՝ ոչ: Այս հանգամանքներից ելնելով՝ փաստարկում ենք, որ անօրինականությունը չի կարող իրավունք և օրինական կարգավիճակ ծնել, բացառությամբ միայն այն դեպքի, եթե օրինական և ամրագրված շահեր ունեցողները հրաժարվեն իրենց իրավունքներից, ինչի միջոցով կարելի է վերականգնել խախտված օրինականությունը: Լեոնային Ղարաբաղի դեպքում հայերը մղել են ազատագրական պատերազմ, ի տարբերություն Կիպրոսի, որտեղ Թուրքիան կազմակերպել և իրագործել է նվաճողական պատերազմ:

4. Քաղաքական համակարգեր. միատարր պետություններ և դաշնություններ

Կիպրոսի և Լեոնային Ղարաբաղի խնդիրների միջև կա ևս մեկ տարբերություն: Կիպրոսը միատարր պետություն է, ոչ թե դաշնային կամ կիսադաշնային համակարգով երկիր, որը բաղկացած է մեկից ավելի

պետական միավորներից կամ ինքնավար տարածքներից: Կիպրոսի դեպքում կիպրաթուրքերը երբեք չեն ապրել հյուսիսում և չեն ունեցել ինքնավար մարզ, ինչպիսին Լեոնային Ղարաբաղն էր: Համապատասխանաբար, կիպրաթուրքերը՝ կղզու հյուսիսի նորաբնակները, երբեք չեն ճանաչվել որպես առանձին պետական միավոր: Իսկ կա՞րոյոք սահմանադրական որևէ միջոց, որի օգնությամբ կարելի է հիմնավորել տարածքի անջատման և Կիպրոսի մասնատման օրինականությունը: Միջազգային հարաբերությունները, ազգային շահերը և իշխանական խաղերը պարարտ հող են ստեղծում և քաղաքական համակարգ են ձևավորում անգամ անօրինական ստատուս-քվոյի համար: Նման քաղաքական համակարգերից է դաշնությունը կամ համադաշնությունը, որոնց միջոցով Կիպրոսում ներկայումս գործող անօրինական ստատուս-քվոն կարող է վերածվել օրինականի՝ միատարր պետությունը բաժանելով «բաղադրիչ պետությունների» և հույս ունենալով, որ համատեղ գոյակցություն կընթանա բաղադրյալ քաղաքական համակարգի շրջանակներում: Կիպրաթուրքերի ներկայիս ապօրինի կարգավիճակն այս դեպքում կօրինականացվի դաշնային բանաձևի միջոցով, և ապագայում Կիպրոսի թուրքերը կկարողանան ավելի մեծ հեշտությամբ անջատվել ու ճանաչվել՝ հռչակելով անկախ պետություն: Սահմանադրական կամ մեկ այլ ճգնաժամ բռնկվելու դեպքում թուրքական կողմը պետության իրավական չափանիշները բավարարելու շատ ավելի մեծ հնարավորություն կստանա դաշնային համակարգի փլուզման պայմաններում, քան միատարր պետության դեպքում, ինչպիսին Կիպրոսի Հանրապետությունն է: Կիպրաթուրքերի անկախության համար օրինականության չափանիշների բավարարումը հիմնավորված կլինի և կբխի երկու բաղադրիչ պետություններից կամ պետական միավորներից բաղկացած դաշնության ստեղծման մասին համաձայնագրից: Այն, ինչ այսօր անօրինական է, վաղը կդառնա օրինական: Այսպիսով,

հակամարտության մեջ ներքաշված կողմերի համար դրա կարգավորման նպատակով նման քաղաքական համակարգի կիրառումն ակտուալ է այդ կարգավորման կենսունակության առումով: Դաշնությունը կամ կիսադաշնային համակարգը կարող է մասնատման հիմք հանդիսանալ, ինչպես դա տեղի ունեցավ Խորհրդային Միության, Չեխոսլովակիայի և նախկին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության դեպքում, ընդ որում, վերջինիս դաշնային համակարգի փլուզումը դոմինոյի էֆեկտով բերեց նաև Կոսովոյի անջատմանը: Կոսովոն ինքնավար մարզ է Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության հիմնադիր անդամ հանդիսացող Սերբիայի տարածքում: Եթե միջազգային հանրության զգալի մասը ճանաչել է Կոսովոյում բնակվող ալբանացիների ինքնորոշման իրավունքը, ապա ինչո՞ւ է մերժվում Լեռնային Ղարաբաղի բնիկ ժողովուրդ հանդիսացող հայերի նույն իրավունքը: Բացի այդ, կարելի է նաև փաստարկել, որ թեպետ Կոսովոյի ալբանացիները կազմում են տեղի բնակչության մեծամասնությունը, սակայն նրանք բնակվում են այնպիսի տարածքում, որտեղ սերբերը սկիզբ են դրել հարուստ քաղաքակրթության, ընդ որում՝ սերբ փոքրամասնությունը շարունակում է ապրել Կոսովոյի հյուսիսում, որը համարվում է Սերբիայի տարածքային, մշակութային և պատմական անբաժանելի մասը: Կոսովոն սերբական սրբավայր է, որտեղ բազմաթիվ են ուղղափառ քրիստոնեական եկեղեցիներն ու վանքերը: Պեչ քաղաքը սերբական քաղաքակրթության փարոսն է, որտեղ հիմնվել է սերբական առաջին ուղղափառ եկեղեցին (*The soul of Europe, 2012*): Սերբ բնակչությունը սփռված էր Կոսովոյի ամբողջ տարածքով մեկ, սակայն այժմ բնակվում է միայն հյուսիսում գտնվող չորս համայնքներում, որոնք կազմում են Կոսովոյի հողատարածքի 13,75%-ը (*Research of the Helsinki Committee for Human Rights in Serbia, 2012*): Սերբերի պահանջատիրությունը Կոսովոյի մշակութային և պատմական ինքնության հանդեպ բխում է ոչ

միայն նախկին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության քաղաքական համակարգից, այլև պատմամշակութային ժառանգությունից: Կոսովոյի ինքնավար մարզ հանդիսանալու արտոնյալ կարգավիճակի պատճառներից մեկը հենց դա էր: Սակայն կարելի է փաստարկել, որ Հարավսլավիայի «ընտրախավը» մտադիր չէր բարձրացնել ալբանացիների դերը քաղաքական համակարգում, թեկուզ և բարձրացրեց նրանց իրավական կարգավիճակը 1974թ. սահմանադրական փոփոխությունով: Ո՞րն է Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի դեպքերի տարբերությունը: Լեռնային Ղարաբաղի հայերը մշտապես բնակվել են մի տարածքում, որի պատմամշակութային դիմագիծը երբեք չի կորցրել իր հայկականությունը (*Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, 2013*), և նրանք ունեն այն բնատուր և նախաստեղծ լիազորությունները, որոնց վրա հիմնվում է ինքնորոշման իրավունքը: Ավելին, այս կոնկրետ տարածքը երբեք չի պատկանել Ադրբեջանին ո՛չ պատմականորեն, ո՛չ էլ մշակութային առումով: Դրան հակառակ, պատմամշակութային տեսանկյունից Կոսովոն պատկանում է Սերբիայի ընդհանուր պատմությանն ու քաղաքակրթությանը: Այնուամենայնիվ, ոմանք կարող են պնդել, որ ալբանացիները ներկայումս կազմում են Կոսովոյի օրինական մեծամասնությունը և, հետևապես, ունեն ինքնորոշման իրավունք: Բացի այդ, նրանք կարող են բավարարել սեփական անկախ պետությունը ստեղծելու համար միջազգային իրավունքի դրույթներով նախատեսվող պայմաններին: Սակայն Կոսովոյի ալբանացիները պետություն ստեղծեցին ոչ միայն սեփական ուժերով, այլև Միացյալ Նահանգների և Եվրամիության ու ՆԱՏՕ անդամ որոշ երկրների կողմից աջակցության և ուժի կիրառման շնորհիվ: Թեև Կոսովոյի ալբանացիներն այդ կոնկրետ տարածքում մեծամասնություն են կազմում, սակայն նրանք փոքրամասնություն են սերբական պատմամշակութային ինքնությունը կրող ավելի լայն աշխարհագրական տարածքում, որտեղ մեծա-

մասնությունը սերբեր են: Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության վարչակազմը և ղեկավարությունը հենվել էին հենց այս հայեցակարգի վրա, երբ ինքնավար մարզի կարգավիճակ էին տրամադրում Կոսովոյին, որը, սակայն, պատկանում էր Հարավսլավիայի դաշնության հիմնադիր անդամ հանդիսացող Սերբիային: Այսպիսով, հնարավոր է փաստարկել, որ Կոսովոն չի կարելի կտրել իր պատմական և մշակութային մայր երկրից: Ըստ այդմ, անկարելի է նաև այս ամենի վրա աչք փակել ու պնդել, թե ալբանական մեծամասնությունը Կոսովոյում սեփական որոշումներ կայացնելու օրինական իրավունք ունի: Այստեղ տեղին կլիներ հարցադրում կատարել. իսկ բասկերը կամ կատալոնացիներն այդ իրավունքն ունե՞ն, թե՞ ոչ:

Լեռնային Ղարաբաղի դեպքում պատմամշակութային մայր երկիր է հանդիսանում Հայաստանը, ոչ թե Ադրբեջանը: Նմանապես, Կիպրոսի պատմամշակութային մայր երկիրը եղել և մնում է Հունաստանը: Կիպրոսի թուրքական համայնքը չի բնակվել կղզու հյուսիսում: Այն փաստը, որ Հունաստանը Կիպրոսի մշակութային և ազգային մայր երկիրն է, հանդիսանում է իրավական, քաղաքական և մշակութային հիմք, որից բխում է Հունաստանի հետ միացման պատմական պահանջը: Կիպրոսի հույները, կազմելով կղզու ողջ բնակչության մոտ 82%-ը, բավարարում են ինքնորոշման իրավունք պահանջելու համար անհրաժեշտ բոլոր չափորոշիչներին, քանի որ հանդիսանում են մշտական բնակչություն, որի պատմամշակութային ինքնությունը դարերի ընթացքում ձևավորվել է որոշակի տարածքում՝ Կիպրոս կղզում: Այնուհանդերձ, Թուրքիայի ներխուժումից հետո Կիպրոսի հույներն ընդունեցին ինչ-որ իմաստով մի «արժանապատիվ փոխզիջում», որպեսզի հասնեն կարգավորման՝ հիմնվելով դաշնություն ստեղծելու թուրքական ռազմավարության վրա: Սա նշանակում է, որ թուրքական ներխուժման ապօրինի գործողությունը չի կարող բերել Թուրքիայի օգտին աշխարհառազմավարական և

աշխարհաքաղաքական արդյունքների, սակայն կարող է բերել դաշնային քաղաքական համակարգի վերաբերյալ կանխատեսված իրավական հետևանքների:

4.1 Տարբերություններ

Որո՞նք են վերոնշյալ երեք հակամարտությունների (Կիպրոս, Լեոնային Ղարաբաղ և Կոսովո) միջև *տարբերություն հաղորդող տարբերը ինքնորոշման իրավունքի տեսանկյունից*: Այս առումով կարելի է ընդգծել հետևյալը.

- Կիպրոսի և Լեոնային Ղարաբաղի դեպքերում սկնհայտ է, որ հույները և հայերը բավարարում են մեծամասնության և աշխարհագրության վերաբերյալ չափորոշիչներին, այդ թվում նաև՝ որոշակի տարածքի պատմամշակութային բնույթի առնչությամբ:
- Կոսովոյի դեպքում՝ ալբանացիներն ապրում են մի տարածքում, որի պատմամշակութային ինքնությունը սերբական է, սակայն բնակչության մեծամասնությունը կազմում են ալբանացիները: Այդ առթիվ Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել է իր իրավաբանորեն *չպարտավորեցնող* կարծիքը, որում ընդգծվում է, որ անկախության հռչակումը «չի խախտել միջազգային օրենքները» (*International Court of Justice, 2010*): Սակայն սերբերը փաստարկում են, որ Կոսովոն Սերբիայի անբաժան մասն է և այնտեղ ապրող ալբանացիները փոքրամասնություն են կազմում սերբական պետության ամբողջ բնակչության կտրվածքով: Ներկայումս երկու կողմերն իրենց հարաբերությունները բարելավելու գործընթաց են սկսել, սակայն Սերբիան առայժմ զիջման չի գնում և Կոսովոյի անկախությունը ճանաչելու մտադրություն չունի: Մյուս կողմից, Լեոնային Ղարաբաղի հայերի և Ադրբեջանի, ինչպես և Թուրքիայի ու Կիպրոսի Հանրապետության միջև հարաբերությունների բարելավ-

ման ուղղությամբ որևէ առաջընթաց չի արձանագրվել: Կիպրոսի կառավարությունն առաջարկել է վերադարձնել շրջափակված Ֆամագուստա քաղաքը, ինչպես որ նախատեսված է ՄԱԿ Անվտանգության խորհրդի թիվ 550 բանաձևով և 1977թ. բարձր մակարդակով կնքված համաձայնագրով (*Ministry of the Foreign Affairs of the Republic of Cyprus, 2013*): Սա երկու համայնքների միջև հարաբերությունները բարելավելու եղանակ է, որը կարող է նպաստել հարցի կարգավորմանն ուղղված ջանքերին և Թուրքիայի ընդունմանը ԵՄ: Եթե Թուրքիան ընդունի Կիպրոսի կառավարության առաջարկությունը և կատարի «հավելյալ արձանագրության» պայմանները (*European Commission, 2013*), ապա Եվրամիությունը կհանի արգելանքը իրեն անդամակցելու ութ նախապայմաններից, որոնք ներկայումս արգելափակված են, իսկ երկու երկրների միջև հարաբերություններն առաջընթաց կապրեն (*European Commission, 2013a*): Ավելին, կիպրաթուրքերի այսպես կոչված «մեկուսացումը» կվերանա, քանի որ Ֆամագուստայի նավահանգիստը կսկսի գործել Եվրոպական հանձնաժողովի վերահսկողության ներքո, ու դրանով իսկ կիպրաթուրքերը կկարողանան ազատ աշխատեցնել իրենց առևտրային և այլ բիզնեսները և հաղորդակցման ուղիներ հաստատել արտաքին աշխարհի, մասնավորապես՝ ԵՄ-ի հետ:

4.2 Երկակի ստանդարտներ

Երեք հակամարտությունները (Կիպրոս, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո) համեմատելուց հետո հանգեցինք հետևյալ խնդիրներին: Առաջինը միջազգային համակարգի գործելակերպի երկակի ստանդարտներն են: Երկրորդը ուժերի ներքին և արտաքին հավասարակշռությունն է, որը վերաբերում է հակամարտության մեջ ներքաշված կողմերից յուրաքանչյուրի տիրապետած հզորությանը: Այս հզորությունն

ազդում է բանակցությունների վրա և կանխորոշում լուծումը: Երրորդը պատերազմի արդյունքներն ու դրանցից բխող հետևանքներն են, որոնք կատալիտիկ դերակատարում ունեն նոր ստատուս-քվոյի ձևավորման և հաստատման համար: Նախքան թուրքական ներխուժումը կիպրոսցի հույները երբեք չեն դադարեցրել իրենց ինքնորոշման իրավունքի պահանջատիրությունը: 1974թ. պատերազմում պարտվելուց հետո հույները *փոխեցին* իրենց քաղաքականությունը և *պատրաստ են* գնալ փոխզիջումների ու լուծում գտնել երկգոտի, երկհամայնք դաշնության տեսքով, որը, սակայն, թուրք-բրիտանական երկփեղկ ռազմավարական նպատակն է եղել 1956-ից ի վեր (*Sarris, 1982, p. 65-66; Dikerdem, 1977, p. 125*): Ի տարբերություն դրա, ռազմի դաշտում հայերի տարած հաղթանակը նպաստեց ինքնորոշման իրենց իրավունքին տեր կանգնելու քաղաքական խնդրի առաջխաղացմանը: Ինչ վերաբերում է Կոսովոյին, 1999թ. ՆԱՏՕ զորքերը ռմբակոծումներով պատժեցին Սլոբոդան Միլոշևիչի բռնապետական ռեժիմը՝ շրջանցելով սովորաբար կիրառվող իրավական հիմքերը, քանի որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից համապատասխան որոշում չէր ընդունվել: Կոսովոյում ալբանական պետության ստեղծումը պայմանավորված էր արտաքին ուժերի գործողությամբ, ինչի օրինականացման փորձ կատարվեց այն երկրների կողմից, որոնք ճանաչեցին Կոսովոյի անկախությունը: Իրադրությունը Կոսովոյում խնդրահարույց է: Նախքան ՆԱՏՕ միջամտությունը ալբանացիները փոքրամասնություն էին կազմում Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության անկման հետևանքով առաջացած Սերբիայի Հանրապետությունում: ՆԱՏՕ միջամտությունից հետո ալբանացիները մեծամասնություն կազմեցին Կոսովոյում, որտեղ սերբերը դարձան փոքրամասնություն: Վերջին նախադասության միտքը հետևյալն է. Կոսովոյի սերբերն իրենց հայրենակիցների հետ միասին մեծամասնություն էին կազմում Սերբիայի Հանրապետության սահմանադրու-

թյամբ նախատեսված սահմաններում: Տարածքային սահմանների նեղացմամբ Կոսովոյի սերբերը ենթարկվում են Կոսովո պետության մեջ բանտարկյալներ դառնալու վտանգին, ընդ որում՝ միջազգային հանրությունն առանձնապես զգայուն վերաբերմունք չի ցուցաբերում սերբերի իրավունքների հանդեպ, ինչպես դա անում էր տարիներ առաջ՝ ալբանացիների դեպքում: Սա է այն վտանգը, որի առջև կհայտնվեին Լեոնային Ղարաբաղի հայերը, եթե չհաղթեին ադրբեյջանցիներին ռազմի դաշտում և եթե դադարեին պահանջել իրենց ինքնորոշման իրավունքը, կամ էլ եթե ուժաթափ լինեին:

4.3 Ռազմական հզորություն

Հակամարտությունների վերլուծության միջոցով կարելի է նկատել պետական և հատկապես ռազմական հզորության նշանակությունն ինքնորոշման իրավունքի կիրառման գործում, ինչն, իմիջիայլոց, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Հայերի ռազմական հզորությունը թույլ տվեց նրանց ավելի մոտենալ իրենց ինքնորոշման իրավունքի իրագործմանը: Նմանապես, թուրքական ռազմական հզորությունը և հույների թուլությունը Կիպրոսի հույներին հեռացրեց ինքնորոշման իրավունքի իրականացումից: Սակայն պարտված հույներն ապավինում են միջազգային իրավունքին և դրա սկզբունքներին, որոնք նաև ծառայում են կիպրաթուրքերի ինքնորոշման իրավունքի նվազեցմանը: Կոսովոյի հարցում ԱՄՆ և ԵՄ մի շարք երկրների մոտեցումը հանգեցրեց ալբանացիներին ինքնորոշման իրավունքի շնորհմանը ռազմական ուժի կիրառման միջոցով և ՆԱՏՕ արտաքին ռազմական միջամտությամբ՝ որպես պատճառաբանություն հրամցնելով Սլոբոդան Միլոշևիչի ռեժիմի կողմից մարդու իրավունքների և միջազգային իրավական նորմերի խախտումը:

Վերոհիշյալի համատեքստում հարկ ենք համարում ընդգծել հետևյալը.

1. Կարելի է անտրամաբանական համարել այն, որ միջազգային հանրության զգալի մասը և ԵՄ անդամների գերակշիռ մեծամասնությունը սատարեցին Կոստվոյում բնակվող այբանացիների ինքնորոշման իրավունքը, մինչդեռ հրաժարվում են նույնն անել Լեռնային Ղարաբաղի հայերի կամ Իսպանիայի բասկերի ու կատալոնացիների համար:
2. Եթե, օրինակ, Հունաստանը ճանաչի Կոստվոն որպես Սերբիայից անջատված պետություն, ապա նմանատիպ խնդիրներ կարող են հարուցվել Թրակիայի մահադակական փոքրամասնության կողմից, որոնց Անկարան համարում է թուրք ազգին պատկանող բնակչություն (*Treaty of Lausanne, 1923, Chapter VI, article 2*): Հաջորդ քայլը կլինի նրանց կողմից ինքնորոշման իրավունքի պահանջադրումը Կոստվոյի մոդելի օրինակով, որքան էլ որ Եվրամիությունը պնդում է, թե Կոստվոյի դեպքը յուրահատուկ է և չի կարող ապագայում օգտագործվել որպես նոր պետության անջատման մոդել: Ահա թե ինչու Իսպանիան և Կիպրոսը հրաժարվում են ճանաչել Կոստվոն: Ակնհայտ է, որ միջազգային համակարգը հիմնված է ոչ միայն միջազգային իրավունքների դրույթների, այլև ազգային շահերի և պետությունների հզորության վրա: Այս առումով միջազգային իրավունքն օգտագործվում է պետությունների կողմից որպես իրենց ազգային շահերն ու նպատակներն առաջ մղելու մեթոդական գործիք: Քաղաքական տեսանկյունից այսպես ենք մեկնաբանում «երկակի ստանդարտների» կիրառման երևույթը:

5. Եզրակացություններ. լուծումների հիմքը և վավերականությունը

Անշուշտ, հիմնական հարցն այն է, թե գոյություն ունի արդյոք մի բանաձև, որի հիման վրա կարելի է լուծում տալ առկա բոլոր չկարգավորված խնդիրներին: Գոյություն չունի որոշակի դեղատոմս, այլ

կան միայն լուծման սկզբունքներ, քանի որ յուրաքանչյուր հակամարտություն ունի իր առանձնահատկությունները: Հետևապես, կարելի է պնդել, որ հակամարտության կարգավորումը մշտապես արտացոլում է դրանում ներքաշված կողմերի միջև հաստատված ուժերի հավասարակշռությունը: Հակամարտությունների կարգավորումը կարող է հիմնվել քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալական և ռազմական մեխանիզմների ամբողջության վրա: Կարգավորման համար կարող են օգտագործվել հետևյալ ռազմավարություններն ու մեթոդները.

1. Ներքնից վերև, ոչ թե վերնից ներքև – այսինքն՝ կարգավորումը նախևառաջ պետք է հիմնվի ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների վրա, որոնց միջոցով էլ հենց կգտնվի հանգուցալուծումը (*Charalambides, 2011, 561-562; Charalambides, 2013, p. 113*):
2. Տարածաշրջանային և գլոբալ միջավայրի մասին քաջատեղյակություն ու դրա գնահատում – քանի որ կարգավորումը կապակցված և կախված է ուժային խաղերից, տարածաշրջանային և համաշխարհային տերությունների հակադրվող կամ միահյուսվող ազգային շահերից:
3. Հակամարտության մեջ ներքաշված արտաքին և ներքին կողմերի հզորությունը և ուժերի հավասարակշռությունը կարգավորման անկյունաքարերն են: Կիպրոսի դեպքում հակամարտության ներքին կողմերն են Կիպրոսի հույները և թուրքերը, իսկ արտաքին կողմերն են երեք երաշխավորները, այսինքն՝ Հունաստանը, Կիպրոսը և Թուրքիան: ԱՄՆ կատալիտիկ դերը նույնպես կարևորվում է, իսկ Ռուսաստանն ու Եվրամիությունը միշտ էլ գործընթացի մասն են կազմում: Հակամարտության միջազգային հարթությունում Թուրքիան հանդիսացավ հակամարտության հարուցիչը, քանի որ ներխուժեց Կիպրոս և շարունակում է պահել կղզու մի մասն իր ռազմական վերահսկո-

ղության տակ: Լեոնային Ղարաբաղի դեպքում հակամարտության ներքին կողմերն էին Լեոնային Ղարաբաղի հայերն ու ադրբեջանցիները: Հայաստանը նույնպես դարձավ հակամարտության մաս և ներգրավվեց Ադրբեջանի հետ բանակցությունների մեջ՝ փորձելով լուծում գտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Զուգահեռներ անցկացնելով՝ Կոսովոյում ապրող սերբերն ու ալբանացիները հակամարտության մեջ ներքաշված ներքին կողմերն են, իսկ ՆԱՏՕ-ն արտաքին դերակատար է, որն առանցքային դեր խաղաց հակամարտությունը դադարեցնելու և ՄԱԿ օժանդակությամբ Կոսովոյում ալբանական իշխանություն հաստատելու գործում:

4. Հակամարտություններում ներքաշված կողմերը կարող են դաշինքներ կերտել: Այս դաշինքները սովորաբար ստեղծվում են արտաքին և ներքին դերակատարների միջև՝ նպատակ հետապնդելով փոփոխել ուժերի հավասարակշռությունը, որը որոշիչ դերակատարում ունի կարգավորումը ձևավորելու վրա:
5. Ժողովրդավարությունը և քաղաքական համակարգի տեսակը: Կարգավորման կենսունակությունը պայմանավորվում է դրա ժողովրդավարական բնույթով: Կիպրոսի, Կոսովոյի և Լեոնային Ղարաբաղի խնդիրները համեմատելով՝ կարելի է փաստարկել հետևյալը: Լեոնային Ղարաբաղի պես փոքրիկ պետությունը չի կարող գոյատևել միայնակ, առանց Հայաստանի պաշտպանության: Հակառակ դեպքում այն անընդհատ կգտնվի ադրբեջանական սպառնալիքի տակ, նույնիսկ խնդրի կարգավորմանը հասնելու պարագայում: Եթե Կիպրոսը միավորվեր Հունաստանին նախորդ դարի 60-ականներին, ապա թուրքական սպառնալիքը կվերացվեր և ներխուժումը կկանխվեր: Հունաստանի ինքնիշխանության տակ գտնվելու դեպքում Թուրքիայի հարձակումը Կիպրոսի վրա կվերաճեր թուրք-հունական պատե-

րազմի՝ հոդս ցնդեցնելով ՆԱՏՕ հարավարևելյան թևը: Այս բանալին կբացեր ԱՄՆ դուռը վճռորոշ գործողությունների համար, ինչպես դա տեղի ունեցավ 1964թ. ամռանը Կոկինայում բռնկված ընդհարումների ժամանակ (*Charalambides, 2011, p. 231-278*): Թուրքական սպառնալիքի կանխարգելման Հայաստանի քաղաքականությունը հիմնված է երկրում ռուսական զորքերի տեղակայման վրա: Առանց ՆԱՏՕ պաշտպանության կոսովցիներն իրենց անվտանգ չէին զգա և հեշտությամբ սերբական ուժերի թիրախը կդառնային:

5.1 Վերջաբան

Հնարավոր չէ ապահովել բարոյականության գերակայությունը, և հետևաբար՝ այն չի կարող դառնալ կարգավորման հիմնասյուն, եթե պետությունը կամ պետությունների դաշինքը բավականաչափ ռազմական ուժի չի տիրապետում: Տեխնոլոգիական և տնտեսական հզորության հետ մեկտեղ ռազմական ուժը ճանապարհ է հարթում դեպի բարոյականություն: Ժողովրդավարությունն ու անվտանգությունը կենսունակության առհավատյան են:

Փետրվար, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. A Memorandum Prepared by the Public International Law & Policy Group and the New England Center for International Law & Policy, June 2002, The Nagorno-Karabagh Crisis: A Blueprint for Resolution.
2. *Braumoelle B.*, 2013, The Great Powers in the International System: Systemic Theory in Empirical Perspective, Kindle Edition.
3. *Bush G.*, 2001, Statement by the President in his address to the Nation. The White House, Office of the Press Security. September 11. Available from: <http://www.opm.gov/guidance/09-11-01GWB.htm>
4. *Charalambides Y.*, 2013, The Third World War, Global Titans and Sworn Soldiers, ERPIC Nicosia.

5. *Charalambides Y.*, 2011, Cyprus Issue: Diplomatic Plots, top secret documents and testimonies from 1950 to 2010), Athens Piotita.
6. *Charalampidis I.*, 2013, Sponsored to Kill, Mercenaries And Terrorist Network in Azerbaijan, “MIA” Publishers Moscow 2013.
7. Charter of the United Nations, Chapter I: Purposes and the Principles, article in paragraph 2. Available from: <http://www.un.org/en/documents/charter/chapter1.shtml>
8. Chhabra k. A, 2013, Superpower Responsibility for State Recognition: Charting a Course for Nagorno-Karabakh, Boston University International Law Journal , Vol 31:131. Available from:[http://www.bu.edu/law/central/jd/organizations/journals/international/volume31n1/documents/Chhabra_JCI\(2\)-1.pdf](http://www.bu.edu/law/central/jd/organizations/journals/international/volume31n1/documents/Chhabra_JCI(2)-1.pdf)
9. *Clausewitz C.*, 1989, On the War, Vaniats Thessaloniki.
10. *Clarke R.A.*, 2010, Cyber-War, The next Threat to National Security and what to do about, as imprint of Harper Collins Publishers.
11. *Collins J.*, 2002, Military Strategy, Principles Practices and Historical Perspectives, Brassey’s, Published in the United States.
12. Council on the Foreign Relations, Montevideo Convention on the Rights and Duties of States Published December 26, 1933, Available from:<http://www.cfr.org/sovereignty/montevideo-convention-rights-duties-states/p15897>
13. *Cuco A.*, 1992, Report of the Commission on Migration, Refugees and Population of the Parliamentary Assembly of the Council of Europe. Available from: [http://www.moi.gov.cy/MOI/pio/pio.nsf/All/20C7614D06858E9FC2256DC200380113/\\$file/cuco%20report.pdf?OpenElement](http://www.moi.gov.cy/MOI/pio/pio.nsf/All/20C7614D06858E9FC2256DC200380113/$file/cuco%20report.pdf?OpenElement)
14. *De Waal T.*, 2003, Black Garden: Armenia and Azerbaijan through peace and war. New York University Press.
15. *Dikerdem M.*, 1977 , Ortadoguda devrim yillari - Bir Buyukelcinin Anilari, Istanbul.
16. *Dougherty, J. and Pfaltzgraff R.*, 1992, Contending Theories of International Relations: A Comprehensive Survey. Athens: Papazisis Publications, vol. 1.
17. *Dougherty, J. and Pfaltzgraff R.*, 1992a, Contending Theories of International Relations: A Comprehensive Survey. Athens: Papazisis Publications, vol. 2.
18. European Commission, 2013a, Enlargement –Turkey , EUR-LEX Access to the European Union Law, Additional Protocol and Financial Protocol signed on 23 November 1970. Available from: http://eur.lex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexplus!prod!CELEXnumdoc&lg=en&numdoc=270A1123%2801%29
19. European Commission, 2013a, Enlargement –Turkey. Available from: <http://ec.europa.eu/enlargement/countries/detailed-country-information/turkey/>
20. European Court of Human Rights, 2001.Case of Cyprus vs Turkey, Application no. 25781/94. Available from: [http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-59454#{\"itemid\":\[\"001-59454\"\]}](http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-59454#{\)

21. *Ferrell H.R.*, 1955, The Mukden Incident: September 19, 1931, The Journal of modern history ,Vol.27, No.1 (March 1955), The University of Chicago Press.
22. Geneva Convention, 1949. Convention relative to the protection of civilian persons in time of war. Available from: http://sedi.esteri.it/rapparm/Major_International_Instruments_on_Disarmament_and_Related_Issues/geneva4.pdf
23. Government House Cyprus, 1956, Top Secret, X123, A Memorandum on Possible Schemes for the Partition of Cyprus, secretariat, Nicosia, 10 November.
24. *Gilpin R.*, 1981, War and Change in the World Politics, Cambridge University Press.
25. Helsinki Committee for Human Rights in Serbia, 2012, Serb Community in Kosovo. Kosovo. Available from :<http://www.helsinki.org.rs/doc/Serb%20Community%20in%20Kosovo.pdf>
26. International Court of Justice, 2010. In accordance with international law of the unilateral declaration of independence in respect of Kosovo. Available from: <http://www.icj-cij.org/docket/index.php?p1=3&p2=4&k=21&case=141&code=kos&p3=4>
27. *James P.*, 2002, International Relations and Scientific Progress: Structural Realism Reconsidered, The Ohio State University , Library of Congress Cataloging in Public, New York.
28. *Kaplan M.*, 1961, “Is International Relations a Discipline”? The Journal of Politics, XXIII, August 1961.
29. *Laasco J.*, 2003, Colonisation by Turkish settlers of the occupied part of Cyprus, Report Committee on Migration, Refugees and Demography, Parliamentary Assembly, Doc.9799 , May 2. Available from: <http://assembly.coe.int/ASP/Doc/XrefViewHTML.asp?FileID=10153&Language=EN>
30. *Martin G.*, 2001, A History of the Twentieth Century: The Concise Edition of the Acclaimed World History. New York: Harper Collins.
31. *Minas G.*, 2007, The self-annulled of Hellenism in Cyprus. Volume 1. Armos, Athens.
32. Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, 2013. Available from <http://www.mfa.am/en/martsakh/>
33. Ministry of the Foreign Affairs of the Republic of Cyprus, 2013, The Cyprus Question. Available from: http://www.mfa.gov.cy/mfa/mfa2006.nsf/documents01_en/documents01_en?OpenDocument
34. Minsk Group, 2013, Statement of the Minsk Group Co-Chairs and the Personal Representative of the OSCE Chairman-in-Office MOSCOW / WASHINGTON / PARIS / TBILISI, 17 October 2013. Available from: <http://www.osce.org/mg/107196>
35. *Mitchell R.*, 1989, The Structure of the International Conflict, Palgrave Macmillan, UK.

36. *Solheim O.B.*, 2008, *The Vietnam War Era: A Personal Journey*, First Nebraska paperback printing: 2008 , University of Nebraska, USA.
37. *Sarris N.*, 1982, *The Other Side, Volume 2 (1955-1963)*, First Edition Grammi, Athens.
38. *Sarris N.*, 1983, *The Other Side, Volume 2, (1955-1963)*, Second Edition, Grammi, Athens.
39. *Sarris N.*, 1990, *The Osmanic Reality, Volume 1, Arsenidis*, Athens.
40. *Singer J.D.*, 1980, *Correlates of War II: Testing some Balance of Power Models*, New York the Free Press.
41. *Tanzi, V.* (2011) *Government versus Markets: The Changing Economic Role of the State*. Cambridge University Press.
42. *The soul of Europe*, 2012, Report on Pech, Available from: <http://www.soulofeurope.org/wp-content/uploads/2012/11/SoulofEuropeTimeforReconciliationReport.pdf>
43. *Treaty of Lausanne, 1923, Chapter VI, Convention on Exchange of Greek and Turkish People, Article 2*. Available from: <http://migrationeducation.org/14.2.html?&rid=5&cHash=1cb57d361eae1ab74f7c4ac436a30e3>
44. *Tsatsos, D.* (1985) *Constitutional Law*, Athens, N. Sakoulas, Third Edition. (Tsatsos refers to G. Gellinek's theory cited in his work: *Theory of the State*, published in 1900).
45. *United States Department of State office of the Historian (2009)*, *Stimson Doctrine*, Retrieved 2009-05-02. Available from: <http://history.state.gov/>
46. *United Nations, 2004, The Concept of Indigenous People*, DEPARTMENT OF ECONOMIC AND SOCIAL AFFAIRS, Division for Social Policy and Development, Secretariat of the Permanent Forum on Indigenous Issues. Available from: <http://www.un.org/en/documents/charter/charter/charter1.shtml>
47. *UN Charter, 1945a, Charter VII: Action with respect to threats to the peace breaches of the peace, and acts of aggression. Article 51*. Available from: <http://www.un.org/en/documents/charter/charter7.shtml>
48. *UN Charter, 1945b, Charter of the United Nations and Statute of the International Court of Justice*. San Francisco. Available from: <http://www.treaties.un.org/doc/Publication/CTC/uncharter.pdf>
49. *Walker C.*, 1990, *The Survival of a Nation, ARMENIA: The Survival of a Nation*, Revised second edition 1990, Christopher J. Walker.
50. *Zürcher C.*, 2007, *The Post-Soviet Wars: Rebellion, Ethnic Conflict, and Nationhood in the Caucasus*, New York: New York University Press, 2007.

ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ «ՊՐԱՀԱՅԻ ՀԱԽՃԱՊԱԿԻՆ».

**Կիպրոսի, Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի
հակամարտությունների համեմատական վերլուծություն**

Յանոս Խարալամբիդիս

Ամփոփագիր

Ռազմավարության կենսունակությունը վճռորոշ գործոն է կարգավորման փխրունությունից խուսափելու համար: «Պրահայի հախճապակու» տեսությունում սա է կարևորվում որպես մեթոդ: Ըստ այդ տեսության, եթե լուծման հիմքում ընկած չեն ուժերի հավասարակշռությունը և ժողովրդավարական արժեքներն ու սկզբունքները, երբ անվտանգությունը պատշաճ կերպով ապահովված չէ, ապա ստեղծված քաղաքական համակարգը ենթակա է վայր ընկնելու և ջարդուփշուր լինելու մեծ վտանգի, ինչպես նուրբ և փխրուն «Պրահայի հախճապակին»:

**ТРОЯНСКАЯ ВОЙНА И «ПРАЖСКИЙ ХРУСТАЛЬ»:
СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КИПРСКОГО,
КАРАБАХСКОГО И КОСОВСКОГО КОНФЛИКТОВ**

Янос Хараламбидис

Резюме

Жизнеспособность стратегии – определяющий фактор, позволяющий обходить хрупкость урегулирования. В теории «пражского хрустала» именно этому придается важность как методу. Согласно этой теории, если в основу урегулирования не заложено равновесие сил, демократические ценности и принципы, а безопасность не обеспечена должным образом, то созданной политической системе грозит опасность упасть и разбиться – подобно тонкому и хрупкому «пражскому хрусталу».

THE TROJAN WAR AND THE “PORCELAIN OF PRAGUE”: A COMPARATIVE ANALYSIS BETWEEN THE CONFLICTS OF CYPRUS, NAGORNO-KARABAKH AND KOSOVO

Yiannos Charalambides

Resume

Viability is a key factor related to a strategy with the aim of averting the fragility of a solution. This is a method inherent to the theory of “porcelain of Prague”. This theory means that when a solution is not in line and is not relied on balance of power and on democratic values and principles, when there is not adequate security, the risk is high for the resultant political system to collapse and thus to be broken into pieces like a vulnerable and fragile “porcelain of Prague”.